«Շիրակի ուսուցիչների միություն» գիտական կենտրոն ՀԿ

Վերապատրաստող կազմակերպություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Գեղարվեստական գրականությունը հասարակագիտության ժամերին

Առարկա- Հասարակագիտություն

Ուսուցիչ՝ Աննա Բարսեղյան

Դպրոց՝ Ֆոտոն վարժարան

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

Գյումրի 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Գլուխ առաջին-Գեղարվեստական գրականության էությունը և կարևորությունը----------5

Գլուխ երկրորդ - Գեղարվեստական գրականության դերը հասարակագիտության ժամերին----------9

Եզրակացություն----------13

Օգտագործված գրականության ցանկ----------14

Ներածություն

Գեղարվեստական գրականությունը արտահայտում է կյանքը պատկերավոր, իսկ աշակերտների մոտ տպավորվում է, այն ինչ ներկայացվում է պատկերավոր:

Գրականությունն օգնում է մեզ տեսնել մարդու ներքին գեղեցկությունը, սովորել հասկանալ և գնահատել այն: Գրականությունը ոգու և անհատականության դաստիարակության հզոր աղբյուր է:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ գեղարվեստական գրականությունը ոչ միայն վերարտադրում է կյանքը այնպես ինչպես նա կա, այլ նաև վերաստեղծում է այն:

Գեղարվեստական գրականության նշանակությունը հասարակագիտության դասավանդման ճանաչողական և կրթական խնդիրների լուծման գործում լայն է և բազմազան: Ուստի դրա կիրառման մեթոդները նույնպես բազմազան են: Գեղարվեստական գրականության կիրառումը կարող է իրականացվել ինչպես դասի ընթացքում, այնպես էլ արտադասարանական գործունեության կամ սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության մեջ:

Գեղարվեստական գրականությունը ոչ միայն ներկայացնում է կյանքը, այլ նաև նպաստում է հասարակության բարքերի, անհատականությունների ձևավորմանը: Կարևոր նշանակություն ունի աշակերտների դաստիարակման գործում: Նաև կարևոր նշանակություն ունի աշակերտների խոսքի, լեզվական կարողությունների զարգացման գործում:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել գեղարվեստական գրականության առանձնահատկությունները հասարակա-գիտության ժամերին:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել է հետևյալ խնդիրը ի՞նչ կարևոր նշանակություն ունի գեղարվեստական գրականությունը հասարակագիտության ժամերին և ի՞նչ կարողունակությունների զարգացման է նպաստում:

Հետազոտակա աշխատանքն իրականացվել է ընդհանուր վերլուծության մեթոդով:

Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականությունից:

Գլուխ 1 Գեղարվեստական գրականության էությունը և կարևորությունը

Գեղարվեստական գրականությունը արվեստի տեսակ է, որն իբրև միակ նյութ օգտագործում է բնական լեզվի բառերն ու կառուցվածքները: Գեղարվեստական գրականության առանձնահատկությունն ի հայտ է գալիս, երբ համադրվում է արվեստի այլ տեսակների (օրինակ՝ երաժշտության կամ կերպարվեստի) հետ, որոնք բառա-լեզվականի փոխարեն կիրառում են այլ նյութ:

Գեղարվեստական գրականությունը կարող է հանդես գալ նաև համատեղվելով արվեստի այլ տեսակների (թատրոն, կինո, երգ, տեսողական պոեզիա), ինչպես նաև՝ բանավոր տեքստի այլ տեսակների հետ փիլիսոփայական, հրապարակախոսական, գիտական և այլն: Գեղարվեստական գրականության, ինչպես և՝ արվեստի մյուս ճյուղերի, բնորոշ գծերից մեկն էլ այն է, որ ընդգրկում է հեղինակային ստեղծագործությունները՝ ի տարբերություն հեղինակ չունեցող բանահյուսական ստեղծագործությունների :

Գրականությունը աշխարհը հասկանալու միջոց է, այն օգնում է մեզ հասկանալ «ինչը լավն է և ինչը վատը», ցույց է տալիս մարդկային համընդհանուր հակամարտությունների ծագումը: Գրականությունն օգնում է մեզ տեսնել մարդու ներքին գեղեցկությունը, սովորել հասկանալ և գնահատել այն: Գրականությունը ոգու և անհատականության դաստիարակության հզոր աղբյուր է: Գեղարվեստական պատկերների բացահայտման միջոցով գրականությունը մեզ տալիս է բարու և չարի, ճշմարտության և կեղծիքի հասկացություններ: Ոչ մի պատճառաբանություն առավել համոզիչ, չի կարող այնպիսի ազդեցություն ունենալ մարդու մտքի վրա, որքան ճշմարտացիորեն գծված պատկերը: Եվ սա է գրականության ուժն ու նշանակությունը:

Գեղարվեստական գրականությանը հաղորդակցվելն ընդլայնում է երեխաների գիտելիքները մարդկանց կյանքի ու բնության երևույթների վերաբերյալ, նրանց մեջ դաստիարակում է բարձր զգացմունքներ, ճիշտ վերաբերմունք է մշակվում շրջապատի նկատմամբ: Հարստանում է երեխաների բառապաշարը, զարգանում երևակայությունը, և սեր է արթնանում ընթերցանության ու գրքի հանդեպ: Գեղարվեստական գրականության շնորհիվ ընդլայնվում է նրանց մտահորիզոնը, հղկվում գեղագիտական ճաշակը, կոփվում կամքը: Այսինքն գիրքը մեծ ազդեցություն

է ունենում երեխայի անձնավորության ձևավորման ու զարգացման վրա, նրա մեջ պատվաստում բարոյական հատկանիշներ:

Իրականության գեղարվեստական արտացոլման և գնահատման բազմազան ձևերն ու եղանակները վերջին հաշվով արտահայտվում են էպիկական (պատմողական), դրամատիկական (թատերգական) և քնարական երկերի մեջ: Վերջինիս հիման վրա էլ, դեռ անտիկ աշխարհից սկսած, գրականությունը բաժանվել է երեք սեռի, որոնք ունեն իրենց վառ արտահայտված յուրահատկությունը, ինչպես արտացոլվող բովանդակության, այնպես էլ նրա բացահայտման սկզբունքների առումով:

Խոսենք յուրաքանչյուրի մասին առանձնին:

Էպոսը քնարաէպիկական ժանրի ստեղծագործություն է, որը ներկայացնում է տվյալ ազգի մշակույթը և ազգային առանձնահատկությունները: Այն գրված է պատմական իրադարձությունների հիման վրա, որոնք հիմնականում պատկանում են ակունքներին ընկած նախնադարյան հասարակարգերի ընդերքին, և ժողովրդական ավանդությունների հիման վրա: Էպոսները սովորաբար գրվում են չափածո բանաստեղծության նման: Էպոսներում սովորաբար նկարագրվում է տվյալ ազգի պատմությունը և ազատության համար պայքարը:

Ազգային էպոսը էպիկական բովանդակությամբ էպիկական ժանրի բանաստեղծության կամ գրականության գործ է, որը ավանդաբար ներկայացնում կամ արտացոլում է որևէ ազգի մշակութային կամ ինքնաճանաչողական ոգին, դա կարող է վերաբերել նաև ինքնուրույնության կամ անկախության ձգտող որևէ էթնիկական կամ լեզվաբանական խմբի: Ազգային էպոսների մեջ հաճախ նկարագրվում է տվյալ ազգային էթնոսի ծագման և զարգացման պատմությունը. կամ պատմության մի մասը, կամ տվյալ ազգության ինքնորոշման կամ ինքնագիտակցման պատմության կարևորագույն դրվագները և այլ ազգային խորհրդանշանների ծագման կամ ընդունման պատմությունը:

Քնարական սեռը կամ որ նույնն է քնարերգությունն ունի գերազանցապես սուբյեկտիվ բնույթ: Այստեղ կյանքի, մարդուն շրջապատող հանգամանքների արտացոլումը տեղի է ունենում ոչ այնքան ուղղակի պատկերման, որքան դրանց նկատմամբ վերաբերմունքի բացահայտման ճանապարհով: Առաջին պլան են մղվում

ոչ թե արտաքին աշխարհի երևույթները, դեպքերը, այլ անհատի հոգում դրանց հարուցած տրամադրությունը, զգացմունքն ու ապրումները։ Դա էլ հենց դառնում է իրականության ըմբռնման ու գաղափարական գնահատման ելակետ։ Քնարական ստեղծագործությունը, որը սովորաբար փոքր ծավալի չափածո երկ է, հիմնվում է որևէ ապրում-պատկերի վրա։ Վերջինիս հուզարտահայտման և ծավալման եղանակով էլ պայմանավորված է քնարական ստեղծագործության կառուցվածքն ու զարգացման ընթացքը։ Սակայն իր արտահայտման եղանակով լինելով սուբյեկտիվ, քնարերգությունն կարող է ներկայացնել օբյեկտիվ իրականության լայն պատկերը՝ բեկված անհատական վերաբերմունքի և ապրումների մեջ։ Քնարական ստեղծագործության հասարակական ու գեղարվեստական արժեքի հիմնական չափանիշն այն է, թե բանաստեղծի անհատական հուզաշխարհի միջոցով ինչպես են արտահայտվում ժողովրդի հոգեկան նկարագրի ու ժամանակի էական գծերը։ Հաջորդ սեռը դա դրամատիկական ստեղծագործություններն են։ Այստեղ հեղինակը ոչ թե պատմում է դեպքերի և հերոսների մասին, այլ ուղղակիորեն ցուցադրում է այդ ամենը մեր առջև։

Էպիկական ստեղծագործության նման, դրաման ևս ունի հստակորեն գծագրված կերպարներ ու գործողության ընթացք՝ սյուժե։Դրամատիկական սեռի ստեղծագործությունները կոչվում են նաև պիեսներ։ Դրամատիկական սեռի ժանրերն են՝ ողբերգություն, կատակերգություն, դրամա, ֆարս։ Դրամատիկական ստեղծագործություններն ունեն հատուկ կառուցվածք. դրանք բաժանվում են մի քանի գործողությունների (արարված, ակտ)։ Թատերգություններն ավելի հաճախ ունենում են 3-5 գործողություն, որոնցից ամեն մեկն ավարտում է սյուժեի զարգացման մի կարևոր օղակը։ Պիեսը գործողությունների բաժանելն անհրաժեշտ է ներկայացման ժամանակ ընդմիջումներ տալու, դեկորացիաները փոխելու համար։ Գործողությունն էլ երբեմն ունենում է իր մասերը՝ պատկերներ, որոնց ավարտից հետո տրվում է ավելի կարճատև դադար։ Գործողությունը կամ պատկերն ունենում են բազմաթիվ ենթաբաժիններ, որոնք կոչվում են տեսիլներ։ Ամեն մի տեսիլ սկսվում ու ավարտվում է այն ժամանակ, երբ բեմի վրա երևում է նոր հերոս, կամ, ընդհակառակը, ներկաներից մեկը հեռանում է։

Գեղարվեստական գրականությունների հետ շփումը հիմնականում աշակերտների մոտ ձևավորում է գեղագիտական ճաշակ: Կատարելով ճանաչողական ֆունկցիա՝ գրականությունները մեզ բերում են հատուկ գիտելիքներ աշխարհի մասին: Սոցիալական և հոգևոր գործընթացների մասին այս գիտելիքները երբեմն ավելի խորն են, քան գիտական գիտելիքները: Գրականությունը մարդու հոգու մասին գիտի ոչ պակաս, եթե ոչ ավելին, քան հոգեբանական հատուկ գիտությունը: Բայց բանն այն չէ միայն, որ ստեղծագործությունները տալիս են նույն գիտելիքը, ինչ գիտությունը, այն տալիս է արժեքավոր գիտելիք, և դրա մեջ անմիջապես ընդգծում է այն, ինչ կարևոր է մարդկանց համար:

Այսպիսով՝ ինչպես նշվեց գեղարվեստական գրականությունը ոչ միայն ներկայացնում է կյանքը, այլ նաև նպաստում է հասարակության բարքերի, անհատականությունների ձևավորմանը:

Գլուխ երկրորդ: Գեղարվեստական գրականության նշանակությունը հասարակագիտության ժամերին

Գեղարվեստական գրականության նշանակությունը հասարակագիտության դասավանդման ճանաչողական և կրթական խնդիրների լուծման գործում լայն է և բազմազան: Ուստի դրա կիրառման մեթոդները նույնպես բազմազան են: Գեղարվեստական գրականության կիրառումը կարող է իրականացվել ինչպես դասի ընթացքում, այնպես էլ արտադասարանական գործունեության կամ սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության մեջ: Դասի ընթացքում գեղարվեստական գրականության ներդրումը հնարավոր է դասի գրեթե յուրաքանչյուր փուլում՝ ուսուցման մեթոդներից որևէ մեկի միջոցով:

Դասարանում գեղարվեստական գրականության հետ ուսուցչի աշխատանքի հիմնական մեթոդներից կարող ենք նշել՝



Գեղարվեստական գրականությունը առավել հստակ ձևավորում է դպրոցականների բարոյական դիրքը, քանի որ այն արտացոլում է մարդու հիմնական բարոյական փորձը: Այն օգնում է սոցիալական ճանաչողության գործընթացին՝ իրականության փոխաբերական, պատկերավոր ներկայացման միջոցով:

Գրականության ներգրավումը մեծացնում է ներկայացման ապացուցողական ուժը և մեծացնում ուսուցչի ուզական ազդեցությունը:

Շատ կարևոր է, ուսուցիչի խոսքը: Արտահայտիչ խոսքը օգնում է ուսուցչին ստեղծել կոլեկտիվ գեղագիտական փորձի մթնոլորտ, գեղագիտական հաղորդակցության իրավիճակ, երբ կրթական հաղորդակցությունը ենթարկվում է գեղարվեստական տրամաբանության օրենքներին: Հասարակագիտության ժամերին ինքս թեմայից կախված երբեմն ներառում եմ հատվածներ՝

- պատմական իրադարձությունների կենդանի պատկերներ, որոնց ուսումնասիրությունը նախատեսված է նաև դպրոցական ծրագրով,
- պատմական դեմքերի,
- կոնկրետ իրավիճակի նկարագիր, որում ծավալվել են անցյալի իրադարձությունները:

Ինքս հաճախ եմ օգտվում մեջբերումների մեթոդից: Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն:

Օրինակ՝ էպոսի մասին խոսելիս մեջբերում եմ անում հատվածներ՝

«. . Ով քնած է՝ արթուն կացեք, ով արթուն է՝ ձիեր թամբեք,
Ով թամբել է զենքեր կապեք, ով կապել է՝ ելեք, հեծեք,
Չասեք Դավիթ գող-գող եկավ, Գող-գող գնաց. . »

***

«Դուք էն սասուն քարեր ինչպե՞ս հաներ եք էն վերին տեղ,
Ու քարե սան սուն եք զարկե. Էս տո՛ւն շեք շինե դուք.
Ապա սասուն մ’եք շինե: Վա՜, քանի սասուն բերդ մի.Էս տուն չէ, էս սասուն է:
Սանասար ասաց.— Բա՛վ է, պապիկ, Էլ ձեն մի՛ հանի. Էլ անուն մի՛ դնի: Ա՛յ պապի, անուն դրվավ.
Անուն էղավ Սասուն: Քանց էդա ավել ի՞նչ անուն:
Որ դու ասիր՝ սասուն քարեր, քարե սանսուն եք զարկե.
Մեր բերդի անուն էղավ Սասուն, Սասուն,
Մեր տան անուն՝ Սասնա տուն:»

Հաջորդ մեթոդը վենի դիագրամն է: Վենի դիագրամը կարելի է օգտագործել նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ՝ գաղափարները, երևույթները, անձերին միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Այն կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում, որտեղ նշվում են գաղափարների, երևույթների, անձերի ընդհանրությունները, իսկ չհատվող մասերում առանձնացվում և շեշտվում են նրանց առանձնահատկությունները: Ինքս կիրառում եմ այս մեթոդը հատկապես երբ ուզում եմ շեշտել ընդհանրությունները և տարբերությունները:

Դասապրոցեսի ընթացքում կիրառում եմ նաև դերային խաղ մեթոդը: Կրթական ծրագրերում աշակերտներին անսպասելի իրավիճակներ եմ առաջարկում, ուր աշակերտներին անհրաժեշտ է ընդունել որևէ դեր կամ տեսակետ, այնուհետև՝ փորձեր անել դա հասունացնելու և ավարտելու: Այն աշակերտները, ովքեր չեն մասնակցում բուն դերային խաղին, ստանձնում են դիտորդի դերը և խաղի ավարտից հետո եզրակացություններ անում: Դերային խաղն արդյունավետ իրականացնելու նախապայմանը առաջարկվող դերային իրավիճակի՝ իրականությանը հնարավորինս մոտ լինելու մեջ է:

Ակտիվ մեթոդների կիրառման արդյունքում ավելացնում ենք աշակերտների ակտիվ մասնակցությունը դասապրոցեսի ընթացքում:

Գեղարվեստական պատկերը մեծացնում է ուսուցչի հուզական ազդեցությունը և զարգացնում որոշակի վերաբերմունք ուսումնասիրվող երևույթների նկատմամբ՝ առաջացնելով համակրանք, հիացմունք, վրդովմունք և ատելություն: Էթիկական նորմերը և գաղափարներն արտահայտվում են ոչ թե վերացական ձևակերպմամբ, այլ վառ կերպարներով, կյանքի կոնկրետ իրավիճակներում գործող անհատականություններով, որոնք կենդանի օրինակ են: Լինելով տեղեկատվության հարուստ աղբյուր՝ գեղարվեստական գրականությունը արժեքավոր նյութ է պարունակում աշակերտների գիտակցության մեջ մարդկության կողմից մշակված բարոյական բարձր սկզբունքները հաստատելու համար:

Եզրակացություն

Այսպիսով, հետազոտական աշխատանքի արդյունքում կարող ենք ասել, որ գեղարվեստական ստեղծագործությունները համարվում են հասարակագիտության դասերի արդյունավետության բարձրացման կարևորագույն միջոց:

Գեղարվեստական գրականությունը հասարակագիտության ժամերին ոչ միայն հիմք է դնում դպրոցականների տեսական գիտելիքների համար, այլև ձևավորում է բարոյական որակներ, պայմաններ է ստեղծում երեխայի ճանաչողական կարողությունների զարգացման համար և նպաստում է աշակերտների քաղաքացիական դիրքորոշման զարգացմանը: Նաև կարևոր նշանակություն ունի աշակերտների դաստիարակման գործում: Ինչպես նաև ունի կարևոր նշանակություն աշակերտների խոսքի, լեզվական կարողությունների զարգացման գործում:

Աշխատանքի արդյունքում աշակերտների մոտ զարգանում են մշակութային, լեզվական գրագիտություն, ինքնաճանաչողական և սոցիալական, սովորել սովորելու կարողունակությունները:

Օգտագործված գրականության ցանկ

- А. Александровна, Применение художественной литературы на уроках обществознания в начальных классах, Бугуруслан, 2016
- А. Иванова, Использование художественной литературы на уроках обществознания, Санкт-Петербург, 2019
- https://thestrip.ru/hy/smoky-eyes/v-chem-rol-literatury-v-zhizni-cheloveka-sochinenie-na-temu-literatura-v-zhizni-cheloveka-rol-hudozhe/ 12.09.23
- https://nikapoghosyan.wordpress.com/2018/11/21/%D5%A7%D5%BA%D5%B8%D5%BD/ 12.09.23
- https://syuzannastepanyan.wordpress.com/2021/01/14/%D6%84%D5%B6%D5%A1%D6%80%D5%A5%D6%80%D5%A3%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/ 13.09.23
-